Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիր

Գորկի-Աբովյան-Ռուսթավելի-Վարպետաց փողոցներում տեղակայված պատմական թաղամասի վերականգնում Գյումրիում

Իրագործելիության ուսումնասիրություն

Բովանդակություն

1. Տեղանքի անվանումը....3
2. Ամփոփ նկարագրություն....5
2.1 Ներածություն....5
2.2 Ծրագրի նպատակը....5
2.3 Տեղանքի առանձնահատկությունները և նշանակությունն ու սեփականության իրավունքները....5
3. Տեղանքի ներկայիս վիճակը....8
4. Ապագայի առաջարկներ: Ակնկալվող ծրագիրը....9
4.1 Հնարավոր ներդրողներ....9
4.2 Ծրագրի իրականացումը....9
4.3 Ծրագրի իրականացման կազմակերպումը....10
5. Ծրագրի կառավարում. պարտականություններ և մեխանիզմներ....11
6. Ռիսկերը....15
7. Հիմնական շահառուները....16
8. Թիրախ ծրագրի ազդեցությունը....17
9. Տեղանքի երկարաժամկետ կայուն կառավարում....18
10. Միջոցառումների ծրագիր....19
11. Բյուջեի նախահաշվարկ (2017-2019թթ.)....21
12. Հղումներ....22
13. Պատասխանատու մարմին....22
14. Տեղեկությունները կազմող կազմակերպության անվանումը....22
15. Տեղեկագիրը կազմեց....22
16. Հավելված....23

1. Տեղանքի անվանումը

Գորկի-Աբովյան-Ռուսթավելի-Վարպետաց փողոցներում տեղակայված պատմական թաղամասի վերականգնում



Նկ. 1. Թաղամաս տեղակայված Գորկի-Աբովյան-Ռուսթավելի-Վարպետաց փողոցներում

* Հետագա տեքստում շենքերը տեղեկագրում նշվում են ըստ համարների

Ընդունված նշաններ.

1 - շինության վայրը և համարը

Հուշարձաններ.
Թիվ 1՝ Սուրբ Նշան եկեղեցի, թիվ 7, թիվ 23
Թիվ 2՝ Սահականուշյան օրիորդաց դպրոց
Թիվ 3՝ բնակելի տուն
Թիվ 4՝ բնակելի տուն
Թիվ 5՝ երկու բնակելի տներ
Թիվ 6՝ Մեր Մկրտչյանի տուն-թանգարան և «Հայկական ավանդական խեցեգործության հետազոտական կենտրոն»



Նկ.2. Բնակելի թաղամաս «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում

2. Ամփոփ նկարագրություն

2.1 Ներածություն

Գորկի-Աբովյան-Ռուսթավելի-Վարպետաց փողոցների պատմական թաղամասը (այսուհետ՝ Թաղամաս) տեղակայված է Գյումրի քաղաքում՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում (Գյումրին Հայաստանի 2-րդ մեծ քաղաքն է): Թաղամասը «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի մաս է կազմում, որը համարվում է պաշտպանվող տարածք: Այս շրջանում տեղակայված շինությունները հիմնականում պատկանում են ուշ XIX դարին և իրենցից ներկայացնում են տեղի ճարտարապետության եզակի օրինակներ՝ ինտեգրված պատմական քաղաքային միջավայրում: Թաղամասի տարածքում գոյություն ունեն 23 գրանցված շինություններ: Դրանք գտնվում են պետական հովանավորության տակ՝ որպես հուշարձաններ, որոնցից մի քանիսն իրենցից արժեքավոր նմուշներ են ներկայացնում (տե՛ս Շիրակի մարզի պատամշակութային անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 1270-Ն որոշումը http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=12877):

Ցանկում ներառված շինությունների մեծ մասը կառուցվել է XIX դարի տեղական ավանդույթներին համապատասխան (բացառությամբ Սուրբ Նշան եկեղեցու): Թաղամասում կառուցվել են մի քանի նոր բնակելի տներ հին տների փոխարեն՝ գոյություն ունեցող քաղաքաշինական համայնապատկերին համապատասխան:

Իրագործելիության ուսումնասիրությունը վերլուծություն է, որը թույլ է տալիս գնահատել մշակութային ժառանգություն հանդիսացող թաղամասի վերականգնմանը ուղղված նպատակների և արդյունքների ձեռքբերման հնարավորությունները: Այս տեղանքը ընտրվել է Տեղական շահագրգիռ կողմերի խմբի նախաձեռնությամբ՝ COMUS ծրագրի շրջանակում, PTA-ի հիման վրա, որի ժամանակ հաշվի են առնվել հետևյալ ռազմավարությունները/առանցքային հարցերը՝

- տեղանքի և տեղանքի մաս կազմող հուշարձանների պատմական և գեղագիտական նշանակությունը,
- ռիսկայնության աստիճանը (առավել քայքայման ռիսկայնությունը),
- առաջարկվող ծրագրի կենսունակությունը (կառավարում և կայունություն):

Ուսումնասիրության մաս է կազմում Գործողությունների ծրագիրը (10-րդ պարբերություն) և Բյուջեի նախահաշվարկը (11-րդ պարբերություն), որը կազմում է ընդհանուր 5 532 424 եվրո:

2.2 Ծրագրի նպատակը

Ծրագիրը նպատակ է հետապնդում վերականգնել և վերակառուցել թաղամասի պատմական ժառանգությունը: Այդ նպատակով հաշվի են առնվել հնարավոր ռիսկերն և հնարավորությունները: Կատարվել է ՍՎՈԹ (SWOT) վերլուծություն: Սահմանվել են նպատակային և արդյունավետ կառավարում իրականացնելու հետագա ուղիները: Այս գործիքների միջոցով հնարավոր կլինի վերականգնել պատմական թաղամասը, ինչը հնարավորություն կտա այն փոխանցել հետագա սերունդներին:

2.3 Տեղանքի առանձնահատկությունները և նշանակությունն ու սեփականության իրավունքները

«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանը հանդիսանում է պետական սեփականություն և շահագործվում է տեղական ինքնակառավարման մարմնի (Գյումրու քաղաքապետարանի) կողմից:

Թաղամասի Գորկի-Աբովյան-Ռուսթավելի-Վարպետաց փողոցներում տեղակայված են 23 շենքեր (XIX-XX դար), որոնցից 6-ը ունեն պետության կողմից պաշտպանվող հուշարձանի կարգավիճակ, իսկ 5-ը՝ չնայած չունեն այդ կարգավիճակը, այնուամենայնիվ կազմում են պատմական միջավայրի կարևոր բաղադրիչը: Տարածքի մնացած 12 շինությունները, որոնք կառուցվել են վերջին 60 տարիների ընթացքում, խաթարում են պատմական արժեքավոր միջավայրը և պատշաճ միջամտության խիստ կարիք ունեն:

Այս թաղամասը «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի մաս է կազմում,

այդ թվում՝ չպաշտպանվող հուշահամալիրներ ներառող փողոցի միջավայրը և Գյումրի-չայ ջրի կոլեկտորը, որոնք նույնպես պատմական արժեքավոր տարածքի մաս են կազմում:

Վերոնշյալ պաշտպանվող հուշարձաններն են՝

Թիվ 1. Սուրբ Նշան եկեղեցին (նկար 3,5) գտնվում է Աբովյան-Ռուսթավելի փողոցների անկյունում: Այն կառուցվել է 1854-1864 թվականներին և մեծ կարևորություն ունի քաղաք այցելող ուխտագնացների և հավատացյալների համար: Եկեղեցին տարբեր արարողությունների կենտրոնական վայր է: Այստեղ տեղի են ունենում կնունքներ, հարսանիքներ, կրոնական ծիսակատարություններ: Խորհրդային շրջանում եկեղեցին վերածվել է պահեստի և 1988 թվականի երկրաշարժի ժամանակ եկեղեցու երկու գմբեթները ընկել են: Եկեղեցին վերակառուցվել է 2000-ականներին: Այն ազգային կարևորություն ներկայացնող հուշարձան է: Ներկայումս եկեղեցու սեփականության իրավունքները հանձնվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Թիվ 2. Սահականուշյան օրիորդաց դպրոցը (նկար 7,8) գտնվում է Աբովյան փողոց թիվ 41 հասցեում: Այն XIX դարում կառուցված երկհարկ տուն է, որտեղ աղջիկները նախնական թերի կրթություն են ստացել: Այն ազգային նշանակության հուշարձան է և ստացել է պետական սեփականության կարգավիճակ Գյումրու քաղաքապետարանի ենթակայության տակ: Այն ունի վերականգնման կարիք:

Թիվ 3՝ Գորկու փողոց 41-43 (նկար 9). XIX դարում կառուցված բնակելի տուն է և տեղական կարևորության հուշարձան: Շենքը կառուցված է սև տուֆից՝ հմուտ հղկված մասերով: Բակի ներքին աջ անկյունում կա նաև որմնախորշ, որտեղ, ամենայն հավանականությամբ, քանդակ է տեղադրված եղել: Այն ունի նաև թեքվող դուռ միջնապատ: Բնակելի տունը վերականգնվել է և բնակեցված է: Շենքը հանդիսանում է մասնավոր սեփականություն:

Թիվ 4՝ Գորկու փողոց 90 (նկար 10). XIX դարում կառուցված բնակելի տուն է և տեղական կարևորության հուշարձան: Բնակելի տունը կիսաքանդ է և բնակեցված: Հանդիսանում է մասնավոր սեփականություն:

Թիվ 5՝ Վարպետաց փողոցը 47-ը բաղկացած է XIX-XX դարերում կառուցված երկու առանձին կանգուն տներից (նկար 12) (1800-1900-ականներ): Դրանք տեղական կարևորության հուշարձաններ են: Այստեղ պահպանվել է նաև մի կիսակառույց հուշահամալիր, որը պատկանում է նույն դարաշրջանին և որի միայն նկուղն է կառուցվել: Հուշարձանը չի ավերվել երկրաշարժից և այն ներկված է կարմիր գույնով, որը հատուկ է ռուսական կայսրության դարաշրջանին: Շինություններից մեկն ունի դասական դռներ և 3 պատուհան, իսկ մյուս շենքը՝ կամարաձև պատուհաններ և միևնույն ժամանակաշրջանի սպիտակ ձողեր: Բնակելի տները վատ վիճակում են և ներկայումս բնակեցված չեն: Երկուսն էլ հանդիսանում են մասնավոր սեփականություն:

Թիվ 6՝ Միեր Մկրտչյանի տուն-թանգարան և «Հայկական ավանդական խեցեգործության հետազոտական կենտրոնը» տեղակայված է Վարպետաց և Ռուսթավելի փողոցների անկյունում: Այն գտնվում է Ռուսթավելի 30/Վարպետաց 45 փողոցներ հասցեում: Այս հուշարձանը ազգային նշանակություն ունի:

- Նույն շինության Ռուսթավելի փողոցի կողմում հայ հայտնի դերասան Միեր Մկրտչյանի թանգարանն է (նկար 13), որը ծնվել է Գյումրիում: Թանգարանում ցուցադրված են դերասանի կյանքը և աշխատանքը ցուցադրող նմուշներ: Այստեղ կան լուսանկարներ, դերասանական հանդերձանք, դերասանին պատկանող որոշ պարագաներ: Միեր Մկրտչյանի տուն-թանգարանը զբոսաշրջիկների և տեղացիների սիրած վայրերից մեկն է: Մ. Մկրտչյանի տուն-թանգարանի մի մասը լավ վիճակում է և աշխատող հաստատություն է: Շենքի թանգարանային մասը պետական սեփականություն է և շահագործվում է Գյումրու քաղաքապետարանի կողմից:

- «Հայկական ավանդական խեցեգործության հետազոտական կենտրոնում» (նկար 14) սովորեցնում խեցեգործական իրեր պատրաստել: Կազմակերպվել են տարբեր ցուցահանդեսներ: Հին ժամանակներում այն կոչվել է «Ուստա Կարո» ռեստորան/խաշատուն (հայերենից թարգմանաբար՝ խաշ նշանակում է կովի ոտքերից պատրաստված հայկական ավանդական ուտեստ, իսկ տուն՝ վայր): «Հայկական ավանդական խեցեգործության հետազոտական կենտրոնի» այդ հատվածը վերականգնվում է: Այն հանդիսանում է մասնավոր սեփականություն:

Թաղամասում կան նաև 15 նորակառույց մասնավոր շենքեր և տներ, որոնք մասնավոր

սեփականություն են հանդիսանում և չեն համարվում հուշահամալիրներ:
Թաղամասում տեղակայված ճարտարապետական հուշարձանների բնույթն և նշանակությունը առանձնահատուկ է Գյումրի քաղաքի պատմությանն ու մշակույթին և առանձնանում է յուրահատուկ գույնով, ավանդույթներով, գեղագիտությամբ: Այն ցուցադրում է XIX-XX դարերի Գյումրու ժողովրդական ավանդական ճարտարապետությունը՝ սև, երբեմն կարմիր տուֆ քարից կառուցված ավանդական փայտե պատշգամբներով, պատուհաններով, զարդարանքներով, ներքին բակերով շենքեր և այլն:

3. Տեղանքի ներկայիս վիճակը

Ներկայումս թաղամասը վատ վիճակում է, որի պատճառը 1988 թվականի կործանարար երկրաշարժն է: Դժբախտաբար, երկրաշարժից հետո թաղամասը չի վերականգնվել և վիճակն ավելի է վատացել: Երկրաշարժից հետո մարդիկ տուն գտնելու խնդիր ունեին: Որոշները հեռացել են քաղաքից, վաճառել իրենց սեփական տները՝ ներառյալ նշված թաղամասում գտնվող տները:

Հուշահամալիրների վիճակը վատթարացել է, կամ դրանք ավերվել են: Երկրաշարժին հաջորդող տարիների ընթացքում հին վայրերում կառուցվել են նոր շենքեր, որոնք հեռու են հուշահամալիների արտաքին տեսքից: Ներկայումս թաղամասի հուշամալիրները տարբեր վիճակներում են գտնվում (լավ/ավերված):

4. Ապագայի առաջարկներ: Ակնկալվող ծրագիրը

4.1 Հնարավոր ներդրողներ

Առաջարկվում է իրականացնել թաղամասի վերականգնում հետևյալ եղանակով՝

- մասնավոր-պետական գործընկերություն, որը ենթադրում է «Վերականգնման ծրագրում» ներգրավվել ոչ միայն պետական ֆոնդեր, այլ հետաքրքրված բոլոր անհատներին և կազմակերպություններին («Հայաստան» հիմնադրամ, «Գյումրու ընկերներ», «Երիտասարդական բանկ» և այլն), որոնք կմասնակցեն ծրագրի ֆինանսավորմանը,
- միջազգային դոնոր կազմակերպություններ՝ Համաշխարհային բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Ասիական զարգացման բանկ և այլ աղբյուրներ:

4.2 Ծրագրի իրականացումը

1-ին քայլ. Անհրաժեշտ է ստեղծել հետևյալ փորձագետներից կազմված պրոֆեսիոնալ խումբ: Նրանք կունենան հստակ պարտավորություններ և աշխատանքը իրականացնելու վերջնաժամկետներ՝ նպատակ հետապնդելով ձեռք բերել ծրագրային նպատակները և արդյունքները.

- Ծրագրի համակարգող,
- Գիտական ղեկավար,
- Միջազգային և տեղական խորհրդատուներ,
- Դրամահավաքի մասնագետներ,
- Ճարտարագետ-տնտեսագետներ,
- Վերականգնողական աշխատանքների ճարտարապետ,
- Կոնստրուկտոր,
- Երկրաբան,
- Երկրաֆիզիկ,
- Ներքին և արտաքին էլեկտրամատակարարման մասնագետներ,
- Ջրմուղագործներ,
- Գազի մասնագետներ,
- Միջավայրի վրա ազդեցության գնահատման մասնագետներ,
- Դենդրոլոգ,
- Վերականգնման աշխատանքների շինարար,
- Թանգարանաբան,
- Ներքին և արտաքին հարդարման դիզայներ:

Մասնագիտական խմբում կիրավիրվեն աշխատելու լավագույն հայ մասնագետները, մասնագետներ, որոնք արդեն փորձառություն ունեն իրենց համապատասխան ոլորտներում: Մասնագիտական խումբը կսկսի աշխատանքները մեկնարկային հանդիպմամբ, որտեղ հստակ կսահմանվեն ծրագրում ներառված հարցերը, խնդիրները, նպատակները, ակնկալվող արդյունքները ձեռք բերելու գործիքները, փուլերը, ժամկետները և ֆինանսավորումը: Մասնագիտական խումբը կձևավորվի Գյումրու քաղաքապետարանի և Հայաստանի կառավարության կողմից: Խմբի մասնագետները կիրավիրվեն կառավարական հաստատություններից՝ Մշակույթի նախարարություն, Քաղաքաշինության նախարարություն, Գյումրու քաղաքապետարան (իրենց համաձայնությամբ, առանց վճարի): Այս խմբի ծրագրի համակարգողը կվճարվի (տե՛ս 11-րդ պարբերությունը), որովհետև նրա աշխատանքն ավելի պատասխանատու է և երկարաժամկետ:

2-րդ քայլ. Գաղափարի շուրջ ներգրավել երիտասարդ կամավորների շահագրգիռ խումբ, որոնք կաշխատեն մասնագիտական խմբին զուգահեռ: Կամավորները կկազմակերպեն ծրագրային զուգահեռ փուլերի դրամահավաքը: Կամավորական խումբը բաց կլինի բոլոր երիտասարդների համար, որոնք ունեն համապատասխան գիտելիք և հմտություններ դրամահավաք կազմակերպելու հարցում: Այսպիսով, հնարավոր կլինի հավաքել պահանջվող գումարը ծրագրի յուրաքանչյուր և ցանկացած փուլի համար (գոյություն ունի նախադեպ, երբ բնակարաններ են գնվել տնակներում ապրող Գյումրու բնակիչների համար): Կամավորների մի

մասը կարող են լինել ավագ դպրոցի աշակերտներ (նրանք կարող են կազմակերպել ձեռագործ բացիկների/շնորհավորական բացիկների, խմորեղենի վաճառք, և հավաքված գումարը կհատկացվի Թաղամասի վերականգնման աշխատանքների մի որոշ մասի ծախսերը հոգալու համար):

3-րդ քայլ. Դրամահավաքի համար մենք առաջարկում ենք ներգրավել հանրահայտ արվեստագետների, որոնք ծնվել են Գյումրիում՝ Տիգրան Համասյան (ջազմեն, կոմպոզիտոր), Տիգրան Մանսուրյան (կոմպոզիտոր), Գազազ (նկարիչ) և այլոց: Նրանց ներկայացումներից և արվեստի գործերի վաճառքից հավաքված գումարը նույնպես կհատկացվի թաղամասի վերականգնմանը և ակտիվացմանը:

4-րդ քայլ. Գյումրու քաղաքացիների համար կկազմակերպվեն «Ժառանգության օրեր» և այդ օրերը կնվիրվեն ծրագրին/ծրագրերին (ըստ ընտրության, նախապատվության ցանկի) և ծրագրի դրամահավաքին: Այն ոչ միայն կբարձրացնի իրազեկության մակարդակը, այլև կհամախմբի տեղի բնակիչներին այդ աշխատանքներում: Բոլոր այն անձինք, ովքեր հետաքրքրված են այս ծրագրով, կարող են մասնակցել դրամահավաքին՝ անհնշան փոքր նվիրատվությամբ:

4.3 Ծրագրի իրականացման կազմակերպումը

Թաղամասի ճարտարապետական հուշարձանները և պատմական քաղաքաշինական միջավայրը ենթակա են ամբողջական վերականգնման:

Թաղամասի պատմական կենտրոնի վերականգնման շնորհիվ կստեղծվի ժամանակակից, հարմարավետ քաղաքաշինական միջավայր ապրելու և աշխատելու համար, որն իր հերթին կխթանի բարեկեցության մակարդակը, ինչպես նաև կնվազեցնի գործազրկության մակարդակը և միգրացիան:

Թաղամասի վերականգնումը երկարաժամկետ գործընթաց է, որը ենթադրում է քայլ-առ-քայլ իրականացնում: Թաղամասի վերականգնման համար առաջարկվում է.

ա) իրականացնել թաղամասի ուսումնասիրություն և փաստաթղթավորում՝ հիմնական նյութերի հավաքում, իրավիճակի համապարփակ գնահատման և կարիքների գնահատման իրականացում,
բ) թաղամասում կատարել ցուցակագրում և քարտեզագրում, ուսումնասիրել առկա ճարտարագիտական ենթակառուցվածքը և դրա տեխնիկական պայմանները,
գ) չափագրել և ուսումնասիրել շինությունները և այլ կառույցներ,
դ) տարանջատել թաղամասի շինությունները և առկա շենքերը ըստ սեփականության տեսակի և ֆունկցիոնալ նշանակության. եզրակացություններ կայացնել դրանց տեխնիկական պայմանների մասին (ձեռնարկելու համար համապատասխան միջոցներ և պլանավորում՝ ըստ սեփականության տեսակի և ֆունկցիոնալ նշանակության),
ե) մշակել թաղամասի մայր հատակագիծը և վերականգնման հայեցակարգը,
զ) վերականգնել հուշահամալիրները՝ հենվելով դրանց տեխնիկական և ֆիզիկական պայմանների հրատապությունից և կարևորությունից (փողոց առ փողոց՝ Աբովյան-Գորկի, Գորկի-Վարպետաց, Վարպետաց-Ռուսթավելի, Ռուսթավելի-Աբովյան),
է) վերականգնել և վերաշահագործել այն շենքերը, որոնք չունեն վատ վիճակում հայտնված հուշարձանի կարգավիճակ՝ ըստ գործող կանոնակարգերի և կարիքների,
ը) իրականացնել էլեկտրականության, գազի և անհրաժեշտ ճարտարագիտական աշխատանքներ,
թ) վերականգնել թաղամասի փողոցների սալիկապատումը և քաղաքաշինական կահավորումը,
ժ) մաքրել և վերականգնել Գյումրի-չայ (կոլեկտորի անվանումը) ջրահավաքը:

Վերոնշյալ կետերի արդյունքում ձեռք կբերվի.

ա) պատմական միջավայրը և քաղաքաշինական ենթակառուցվածքը նորացնելու պլան,
բ) կտրամադրվի/կհաստատվի երկարաժամկետ կառավարման ծրագիր,
գ) կբարելավվի տեղի բնակիչների կեցությունը:

5. Ծրագրի կառավարում. պարտականություններ և մեխանիզմներ

Թաղամասի վերականգնումը երկարաժամկետ գործընթաց է և մեծ ներդրումներ է պահանջում, որը ենթադրում է թաղամասի վերականգնմանն ուղղված գործողությունների փուլ առ փուլ իրականացում: Ուստի, ելնելով հրատապությունից և անհրաժեշտությունից, մենք առաջարկում ենք նախ և առաջ վերականգնել հուշահամալիրները:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները և դրանց պատմական միջավայրը պահպանվում և կանոնակարգվում են Հայաստանի օրենքներով՝

- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» (www.parliament.am/legislation.php?sel=show&ID= 1641&lang=arm),
- «ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին», (www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1351&lang=arm):

ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի համաձայն ազգային նշանակության հուշահամալիների արտաքին և ներքին տեսքի փոփոխություններ կարելի է կատարել միայն ՀՀ կառավարության որոշմամբ, իսկ տեղական նշանակության հուշարձանների դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ:

Հուշահամալիրների պահպանությունը և վերականգնումը պետք է հենվի հուշարձանների՝ որպես մշակութային արժեք փաստի վրա, և վերականգնումը պետք է կատարվի լավագույն կերպով՝ առանց վնասի և ճշգրիտ: Անհրաժեշտ է պահպանել քարի կառուցվածքը գիտական լաբորատոր ուսումնասիրությունների հիման վրա՝ պահպանելով հավանգատիպ սոսնձումը, շինությունների ճարտարապետական կառուցվածքի ամրությունը, ժամանակի շինարարական տեխնոլոգիաները: Պետք է վերականգնվեն առաջնային ֆունկցիաները, իսկ փոփոխության դեպքում, պետք է պահպանվեն սկզբնական հատակագծի լուծումները:

Հուշահամալիրների և տեղանքների պահպանությունը հենվում է ժամանակակից գործելակերպերի և գիտելիքի վրա, որը հիմնված է պահպանության մասին միջազգային սկզբունքների՝ Վենետիկի խարտիա փաստաթղթի վրա: Խարտիայի բոլոր դրույթների համաձայն՝ թաղամասի պատմական և ճարտարագիտական հուշարձանները ու պատմական միջավայրը, ինչպես նաև «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի բաղադրիչ մասը վերականգնման կարիք ունեն:

Թիվ 1. Սուրբ Նշան եկեղեցին, որը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատասխանատվության ներքո է, լավ վիճակում է: Այն վերականգնման կարիք չունի:

Թիվ 2. Աբովյան փողոց թիվ 41-ում գտնվող երկհարկ բնակելի տունը (նախկինում օրիորդաց դպրոց) վերականգնման և վերաշահագործման կարիք ունի: Այն Գյումրու քաղաքապետարանի ենթակայության ներքո է: Այնուամենայնիվ, հաշվի առնելով վերականգնման համար պետական բյուջեի սուղ միջոցները, ծրագրի աշխատանքների իրականացումը և շինարարությունը կարելի է կատարել որպես նվիրատվություն հատկացված դրամական միջոցներով:

Այնտեղ առաջարկվում է ստեղծել ինքնազարգացման և բազմաֆունկցիոնալ ժամանցի կենտրոն (ոչ ֆորմալ կրթական գոտի, խաղագոտի, բաց խոհանոց, յոգայի սպիտակ տուն, արվեստի սրահ, թատերական հատված երաժշտական գործիքներով և այլն):

Այս ծրագիրը կարող է իրականացվել երիտասարդների խմբի կողմից («Լոգոս» ՀԿ)՝ Գյումրիի քաղաքապետարանի աջակցությամբ: Նման կենտրոն Գյումրիում չկա, ինչը բացասաբար է անդրադառնում երիտասարդների՝ իրենց ազատ ժամանակը արդյունավետ օգտագործելու վրա: Նման կենտրոնի բացումը կմիավորի տարբեր մասնագիտական բնագավառներում կրթություն ստացող երիտասարդներին, կնպաստի նրանց կրթական և մշակութային աճին և նրանցից կձևավորի քաղաքացիներ:

ուժեղ կողմեր	թույլ կողմեր
▪ հուշահամալիրի վերականգնում և վերաշահագործում, ▪ ժամանցի վայր, առողջ ապրելակերպ և ինքնազարգացում	▪ սահմանափակ ռեսուրսներ, մասնավոր վայրերի և սեփականատերերի առկայություն, բնակիչների տարհանման հետ կապված խնդիրներ
հնարավորություններ	**վտանգներ**
▪ նոր ընկերների և նոր գիտելիքների ձեռքբերում, ▪ հոգու և մարմնի առողջացում, ▪ նոր աշխատատեղերի ստեղծում, ▪ երիտասարդ սերնդի զարգացման խթանում	▪ պահանջվող գումարը հավաքելու ձախողում, ▪ վերականգնման աշխատանքների ձգձգում, ▪ երիտասարդները չեն օգտվի առաջարկից և շենքը (նորից) կլքվի, ▪ հուշահամալիրների օգտագործում ոչ իրենց արժեքին համապատասխան

Թիվ 3. Գորկի փողոց 41, 43 բնակելի տունը վերականգնված և բնակեցված է: Այն կարիք չունի վերականգնման աշխատանքների: Տունը հանդիսանում է մասնավոր սեփականություն:

Թիվ 4՝ Գորկի փողոց 90 հասցեում բնակելի տանը այլ շինարարական աշխատանքներ են կատարվում: Այն կիսաքանդ է և հանդիսանում է մասնավոր սեփականություն: Հաշվի առնելով սեփականատերերի՝ հուշահամալիրը վերականգնելու անկարողությունը (ֆինանսների բացակայության պատճառով), պետք է առաջարկել Գյումրու քաղաքապետարանին վճարել ֆինանսական միջոցներ հուշահամալիրի սեփականատիրոջը կամ համապատասխան արժեքի բնակարան հատկացնել քաղաքապետարանի բնակարանային ռեսուրսներից:

Մենք առաջարկում ենք վերականգնել հուշահամալիրը և Գյումրու ժառանգության կենտրոնի մի մասը տեղակայել այնտեղ (կենտրոնի մի մասը գտնվում է Գյումրու քաղաքապետարանի շենքում): Սա վերաբերում է մասնավորապես գրախանութին: Այստեղ տեղի կունենա ոչ միայն գրքերի վաճառք, այլև գրքերի շնորհանդեսներ և ժամանակակից գրողների հետ հանդիպումներ: Հայաստանի մշակույթի նախարարությունը պատասխանատվություն կստանձնի գրախանութ-ատելյեների/հանդիպումների համար գրքեր մատակարարելու գործում:

ուժեղ կողմեր	թույլ կողմեր
▪ հուշահամալիրի վերականգնում և վերաշահագործում, ▪ գրախանութ-ատելյեների հիմնում/հանդիպումների անցկացում	▪ սահմանափակ ռեսուրսներ, ▪ մասնավոր վայրերի և սեփականատերերի առկայություն, ▪ բնակիչների տարհանման հետ կապված խնդիրներ
հնարավորություններ	**վտանգներ**
▪ մշակութային և գիտական վայրի ստեղծում, ▪ գրքերի քննարկումներ, ▪ հեղինակների հետ հանդիպումներ, ▪ նոր աշխատատեղերի ստեղծում	▪ վերականգնման աշխատանքների ձգձգում, ▪ սեփականատիրոջ կողմից վաճառք իրականացնելու անհամաձայնություն կամ վաճառելու համաձայնություն մեծ գումարների դիմաց, ▪ հուշահամալիրի շահագործում իր արժեքին ոչ համապատասխան, ▪ գրքերի ոչ շահութաբեր վաճառք, ▪ սեփականատիրոջ կողմից վաճառք իրականացնելու անհամաձայնություն կամ վաճառելու համաձայնություն մեծ

	գումարների դիմաց, ▪ քիչ այցելուներ

Թիվ 5. Վարպետաց փողոցի աջ կողմի երկու բնակելի շենքերը քանդված են, բակը ավերված է և անկանոն, հանդիսանում է մասնավոր սեփականություն: Առաջարկվում է, որպեսզի Գյումրու քաղաքապետարանը գնի հուշահամալիրները ներկայիս տերերից և նույն գնով վաճառի նոր տերերին, որոնք հետաքրքրված և ֆինանսապես ունակ կլինեն վերականգնել հուշահամալիրի ճարտարապետական և պատմական տեսքը՝ ավանդական պատերի և քարերի շարվածքը, կռված դարպասները, ծխնելույզը, ջրատարերը և ձագարները, պատուհանների փեղկերը և փայտե հեծանները, կկարողանան բարելավել տների ներքին բակերը և ավանդապես դրանց հետ ասոցացված Գյումրու ավանդույթները, հետո վերաշահագործել շինությունները որպես հայկական ավանդական ճաշատեսակների ռեստորան-խանութ:

Նման ռեստորան-խանութ Գյումրիում չկա, բայց դրա անհրաժեշտությունը կա: Այս ռեստորան-խանութը կօգնի վերականգնել Գյումրու խոհանոցի ավանդական մշակույթը (կովի ոտքերից խաշ ապուր, կովի գլխից քյալա, մսից բաստուրմա, մսից սուջուխ, պանրից խաշիլ և այլն):

ուժեղ կողմեր	**թույլ կողմեր**
▪ հուշահամալիրի վերականգնում և վերաշահագործում, ▪ ռեստորան-խանութի հիմնում	▪ սահմանափակ ռեսուրսներ, ▪ մասնավոր վայրերի և սեփականատերերի առկայություն, ▪ բնակիչների տարհանման հետ կապված խնդիրներ
հնարավորություններ	**վտանգներ**
▪ հայկական ճաշատեսակները ճաշակելու հնարավորությունը, ▪ թաղամասի ենթակառուցվածքի զարգացման օժանդակությունը, ▪ սրճարանների հիմնումը, ▪ նոր աշխատատեղերի ստեղծումը կարող են խթանել տեղական զբոսաշրջությունը, ▪ ինչպես նաև տեղի ժողովրդի հպարտության զգացումը	▪ անհրաժեշտ գումարի բացակայություն և աշխատանքների երկարաձգում, ▪ հուշահամալիրի շահագործումը ոչ իր արժեքին համապատասխան, ▪ սեփականատիրոջ կողմից վաճառք իրականացնելու անհամաձայնություն կամ վաճառելու համաձայնություն մեծ գումարների դիմաց, ▪ քիչ հաճախորդներ

Թիվ 10. Վարպետաց փողոցի անկյունային շենքի մի մասում տեղակայված է «Հայկական ավանդական խեցեգործության հետազոտական կենտրոնը» և արդեն գտնվում է վերականգնման գործընթացում: Այն մասնավոր սեփականություն է հանդիսանում (Գյումրիում Իտալիայի դեսպան): Ներկայումս առաջին հարկում իրականացվում են վերանորոգման աշխատանքներ և բացվել է խեցեգործության արհեստագործական դպրոց: Վերականգնման աշխատանքները ընթացքի մեջ են, և ակնկալվում է, որ Ֆրանսիայից կիրավիրվի արծաթագործության և գոբելենի մասնագետ, որը վերապատրաստում կանցկացնի, և կբացվեն արծաթագործության ու գոբելենի՝ բոլորի համար հասանելի խմբակներ:

Հաջորդ հատվածում գտնվում է Միեր Մկրտչյանի տուն-թանգարանը Ռուսթավելի փողոցում: Այն լավ վիճակում չէ, և շահագործվում է որպես պետական սեփականություն: Այս թանգարանը բացվել է հետխորհրդային ժամանակաշրջանում և, համեմատած այլ թանգարանների, մեծ ներուժ ունի, ինչը կապված է հայտնի դերասանի անվան հետ:

Միեր Մկրտչյանի տուն-թանգարանի վերականգնման և շահագործման ծրագիրը կիրականացվի ՀՀ մշակույթի նախարարության կողմից, որը կփորձի նաև ներգրավել մասնավոր ֆոնդեր: Այցելուները կարող են ծանոթանալ թանգարանի որոշ նմուշներին տեսաձայնային ուղեցույց բջջային հավելվածի միջոցով, որը Մշակույթի նախարարությունը կներդնի 2017

թվականին տարբեր թանգարաններում: Այն հնարավորություն կտա տեքստային, ձայնային և տեսողական տեղեկություններ ստանալ թանգարանի, դերասանի և ցուցանմուշների մասին:

Այլ շինություններ

- Թիվ 14. Նոր երկհարկ շենք է կառուցվել Գորկի-Վարպետաց փողոցների անկյունում հուշահամալիրի հիմքի վրա (նկար 15): Այն հանդիսանում է մասնավոր սեփականություն:
  Առաջարկվում է դիմել սեփականատիրոջը, որպեսզի վերջինս այն դարձնի առաջնակարգ հյուրանոց, ինչը նոր աշխատատեղեր կստեղծի և կխթանի թաղամասի ընթացիկ կյանքը: Հյուրանոցի գաղափարը հրատապ է և անհրաժեշտ, որովհետև Գյումրիում առաջնակարգ հյուրանոցներ չկան (կան երկու լավ հյուրանոցներ՝ «Բեռլին» և «Կարս»):

- Թիվ 10. Առաջարկվում է վերանորոգել և արդիականացնել հուշարձան չհամարվող շենքի (սպիտակ շենքի) բնակարանը Աբովյան-Գորկի փողոցների անկյունում (նկար 16, 17):

- Թիվ 22, 23. Առաջարկվում է վերանորոգել և արդիականացնել երկու մասնավոր տներ (նկար 18) Ռուսթավելի փողոցում (դրանք կառուցվել են 1950-ականներին):

- Առաջարկվում է իրականացնել խուլ նրբանցքի մասնավոր տների (Ռուսթավելի-Գորկի փողոցներ) տեղանքի, հարակից փողոցների մոնիտորինգ՝ քաղաքաշինական նորմերին համապատասխան: Արդյունքում Գյումրու քաղաքապետարանը կիրականացնի խուլ նրբանցքի բարեկարգման աշխատանքներ (նկար 19)՝ նախագծին համապատասխան:

- Թաղամասի փողոցները, էլեկտրականությունը, հուշարձան չհամարվող շենքերի հատվածը, «Գյումրի-չայ» ջրի կոլեկտորը (նկար 20) նույնպես վերականգնման կարիք ունեն, որոնց համար պատասխանատվությունը կրում է քաղաքապետարանը: Բոլոր այս աշխատանքները կիրականացվեն ՀՀ կառավարության կողմից:

6. Ռիսկերը

- սեյսմիկ առումով անկայուն տարածք,
- սեփականատերերի հետ անհամաձայնություն,
- դրամահավաքի արդյունքում հավաքված անբավարար միջոցներ,
- ներդրողների բացակայություն,
- հուշահամալիրների ոչ ճիշտ օգտագործում,
- պոտենցիալ ներդրողներ գտնելու խնդիր,
- մասնավոր վայրերի և սեփականատերերի առկայություն,
- քիչ հաճախորդներ/այցելուներ,
- գրքերի ոչ շահութաբեր վաճառք,
- երիտասարդները չեն օգտվի առաջարկից և շենքը (նորից) կլքվի,
- բնակիչների տարհանման հետ կապված խնդիրներ:

7. Հիմնական շահառուները

Ծրագրի հիմնական շահառուներն են՝

- Հայաստանի Հանրապետության կառավարություն,
- Գյումրու քաղաքապետարան,
- «Կումայրի» պատմամշակութային հետազոտական թանգարան,
- մասնավոր սեփականատերեր,
- անհատներ և ՀԿ-ներ,
- երիտասարդություն,
- աշխատողներ,
- բնակչություն,
- տեղացի և միջազգային զբոսաշրջիկներ:

8. Թիրախ ծրագրի ազդեցությունը

Թաղամասի վերականգնումը և կառավարումը Հայաստանում նման պատմական արժեք ներկայացնող տարածքներ ստեղծելու պիլոտային ծրագիր կհանդիսանա, որը կխթանի նոր աշխատատեղերի ստեղծումը, երիտասարդների կրթությունն ու զբաղվածությունը, զբոսաշրջությունը, ենթակառուցվածքը: Այն պիլոտային կլինի նաև հուշահամալիրների պահպանության, օգտագործման և հանրամատչելի դարձնելու, ինչպես նաև շահութաբերության տեսանկյունից:

9. Տեղանքի երկարաժամկետ կայուն կառավարում

Թաղամասի վերականգնման ծրագրի կառավարումը կհամակարգի Գյումրու քաղաքապետարանը, որը նաև ծրագրի ղեկավար կհանդիսանա՝ որպես «Կումայրի» պատմամշակութային հետազոտական թանգարանի սեփականատեր: Թաղամասը Գյումրի քաղաքի և Հայաստանի Հանրապետության պատմական ժառանգության վառ օրինակ է: Թաղամասում կան XIX դարի բազմաթիվ հուշահամալիրներ և վերականգնումից հետո թաղամասում կարիք կլինի իրականացնել երկարաժամկետ կայուն կառավարում, որի համար անհրաժեշտ է՝

- շահագրգիռ բոլոր կողմերի կողմից նմանատիպ ընկալում և պատմական թաղամասի համապարփակ պահպանություն և օգտագործում,
- փուլային ծրագրի իրականացում՝ վերահսկելու համար աշխատանքները, գնահատելու համար չափանիշները և կողմերի միջև հետադարձ կապ ապահովելու համար,
- նոր գործընկերների և շահագրգիռ անձանց ներգրավում թաղամասի աջակցության և զարգացման գործում,
- անհրաժեշտ ֆոնդերի ներգրավում և ապահովում,
- մոնիտորինգի անցկացում, փոփոխությունների և ենթադրվող միջամտությունների գնահատում,
- թաղամասի մշակութային և նյութական ներուժի զարգացում,
- աշխատակազմի մշտական վերապատրաստում,
- շահույթ:

10. Միջոցառումների ծրագիր

Թաղամասի աշխատանքները կսկսվեն 2017 թվականի մարտից (3-րդ ամիս)

No	Գործողության նկարագրություն	Պատասխանատու մարմին	Տևողություն
1	Մասնագիտական խումբ	Հայաստանի կառավարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ	ամիս 3 > ամիս 4, 2017
2	Ձևավորել ծրագրի կառավարման թիմ	Տեղական ինքնակառավարման մարմիններ, սոցիալական կազմակերպություններ, «Կումայրի» պատմական արգելոց-թանգարան	ամիս 4 > ամիս 5, 2017
3	Նախագծման աշխատանքների համար պայմանագրային հարաբերությունների նախապատրաստական գործընթաց	Տեղական ինքնակառավարման մարմին	ամիս 5 > ամիս 6, 2017
4	Տեղանքի ուսումնասիրություն և փաստաթղթերի կազմում • Հիմնական փաստաթղթերի կազմում • Թաղամասում իրավիճակի համապարփակ վերլուծություն • Կարիքների գնահատում	Տեղական ինքնակառավարման մարմիններ, «Կումայրի» պատմական արգելոց-թանգարան	ամիս 6 > ամիս 8, 2017
5	Թաղամասի շենքերի ցուցակագրում և քարտեզագրում և ճարտարագիտական ենթակառուցվածքի/տեխնիկական պայմանների սահմանում	«Կումայրի» պատմական արգելոց-թանգարան, Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան, Երևան	ամիս 5 > ամիս 7, 2017
6	Շենքերի չափագրում	Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարան, Երևան	ամիս 4 > ամիս 7, 2017
7	Մայր նախագծի և վերականգնման հայեցակարգի մշակում	ՀՀ մշակույթի նախարարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ, սոցիալական կազմակերպություններ, «Կումայրի» պատմական արգելոց-թանգարան	ամիս 7 > ամիս 12, 2017
8	Հուշահամալիրների վերականգնում		
8.1	Ծրագրի մշակում (հուշահամալիրներ)		
	Թիվ 2	Տեղական ինքնակառավարման մարմիններ, մասնավոր սեփականատեր	ամիս 5 > ամիս 6, 2018

	Թիվ 4	Տեղական ինքնակառավարման մարմին	ամիս 5 > ամիս 6, 2018
	Թիվ 5	Տեղական ինքնակառավարման մարմիններ, մասնավոր սեփականատեր	ամիս 5 > ամիս 6, 2018
	Թիվ 6 /անկյուն/ • Վարպետաց փողոց/հատված/ • Ռուսթավելի փողոց/հատված/	Տեղական ինքնակառավարման մարմիններ, մասնավոր սեփականատեր, ՀՀ մշակույթի նախարարություն	Կատարված է ամիս 5 > ամիս 7, 2018
8.2	Վերականգնում (հուշահամալիրներ)		
	Թիվ 2	Տեղական ինքնակառավարման մարմիններ, մասնավոր սեփականատեր	ամիս 6 > ամիս 9, 2019
	Թիվ 4	Տեղական ինքնակառավարման մարմին	ամիս 6 > ամիս 9
		Մասնավոր սեփականատեր	2019
	Թիվ 5	Տեղական ինքնակառավարման մարմիններ, մասնավոր սեփականատեր	ամիս 7 > ամիս 11, 2019
	Թիվ 6 /անկյուն/ • Վարպետաց փողոց/հատված/ • Ռուսթավելի փողոց/հատված/	Տեղական ինքնակառավարման մարմիններ, մասնավոր սեփականատեր, ՀՀ մշակույթի նախարարություն	Գործընթացի մեջ ամիս 7 > ամիս 11, 2019
9	Այլ շինությունների վերանորոգում	Տեղական ինքնակառավարման մարմին	ամիս 5 > ամիս 12, 2019
10	Ճարտարագիտական աշխատանքներ /էլեկտրականություն, գազ, բարեկարգում/	Տեղական ինքնակառավարման մարմին	ամիս 5 > ամիս 12, 2019
11	Գյումրի-Չայ կոլեկտորի մաքրում և վերականգնում	Տեղական ինքնակառավարման մարմին	ամիս 5 > ամիս 10, 2019

11. Բյուջեի նախահաշվարկ (2017-2019թթ.)

No	Գործունեության ծախսեր	Միավոր	Միավորի քանակ	Միա-վորի գին	Արժեք	Պետա-կան ներ-դրում	Այլ միջոցներ
1	Ծրագրի կառավարման թիմ	ամիս	36	3 000€	108 000€		
2	Արտաքին փորձագիտություն	օր	50	250€	12 500€		12 500€
3	Գնահատում (կարիքներ, կառուցվածքային, տեխնիկական)	օր	15	250€	3 750€		3 750€
4	Ցուցակագրում (քարտեզագրում, Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ)	օր	15	250€	3 750€	2 500€	1 250€
5	Շենքերի չափագրում	քմ	1 562	2€	3 124€		3 124€
6	Վերականգնման նախագծի փաթեթներ	քմ	680	200€	136 000€		136 000€
7	Նախագծի փաթեթներ	քմ	882	150€	132 300€		132 300€
8	Վերականգնման աշխատանքներ	քմ	680	2 000€	1 360 000€		1 360 000€
9	Շինարարական աշխատանքներ (այլ շինություններ)	քմ	882	1 500€	1 323 000€		1 323 000€
10	Պետական ենթակառուցվածք	քմ	1 600	1 000€	1 600 000€		1 600 000€
11	Բարեկարգում և քաղաքաշինական կահավորում	քմ	1 600	500€	800 000€	20 000€	780 000€
12	Գյումրի-չայ ջրի կոլեկտորի մաքրում և վերականգնում					50 000€	
	Ընդամենը				**5 532 424€**	**72 500€**	**5 351 924€**

12. Հղումներ

- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (հայերեն),
- «ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ», ՀՀ օրենք (հայերեն),
- http://www.armenianheritage.org/hy/monument/Giumri-I/1288
- http://www.arlis.am/
- https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%B8%D6%82%D6%80%D5%A2_%D5%86%D5%B7%D5%A1%D5%B6_%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%AB_(%D4%B3%D5%B5%D5 %B8%D6%82%D5%B4%D6%80%D5%AB)
- ՊՏԱ, Գորկի-Աբովյան-Ռուսթավելի-Վարպետաց փողոցներում տեղակայված պատմական թաղամասի վերականգնում (փորձագետ՝ Գայանե Նազլուխանյան, էլեկտրոնային փոստ՝ gaynaz2001@mail.ru)

13. Պատասխանատու մարմին

Գյումրու քաղաքապետարան (հասցե՝ քաղաք Գյումրի, Շիրակի մարզ, Հայաստանի Հանրապետություն)

14. Տեղեկությունները կազմող կազմակերպության անվանումը

«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան (կոնտակտային անձ՝ Ստեփան Տեր-Մարգարյան, էլեկտրոնային փոստ՝ termargaryan52@mail.ru)

15. Տեղեկագիրը կազմեց

Փորձագետ՝ Լուսինե Իգիթյան (էլեկտրոնային հասցե՝igityluso@gmail.com)

16. Հավելված

Նկ.3. Սուրբ Նշան եկեղեցի

Նկ.4. Աբովյան փողոցի տեսքը

Նկ.5. Սուրբ Նշան եկեղեցի (տեսքը)

Նկ.6. Վարպետաց փողոցի տեսքը

Նկ.7. Սահականուշյան օրիորդաց դպրոց (41 Աբովյան փողոց, առաջամաս)

Նկ.8. Սահականուշյան օրիորդաց դպրոց (41 Աբովյան փողոց, բակ)

Նկ.9,10 Բնակելի տուն (Գորկի փողոց 41-43)

Նկ.11. Բնակելի տուն (Գորկի փողոց 90

Նկ.12. Գորկի փողոցի տեսքը

Նկ.13,14. Երկու բնակելի տուն (Վարպետաց փողոց 47)

Նկ.15,16. Միեր Մկրտչյանի տուն-թանգարան (Ռուսթավելի փողոց 30)

Նկ.17,18. «Հայկական ավանդական խեցեգործության հետազոտական կենտրոն» (Վարպետաց փողոց 45)

Նկ.19. Գորկի-Վարպետաց փողոցների վրա շինություն (անկյուն)

Նկ. 20. Աբովյան-Գորկի փողոցների վրա շինություն (անկյուն)

Նկ.21,22. Աբովյան-Գորկի փողոցների վրա շինություն (անկյուն)

Նկ.23. Երկու բնակելի տուն Ռուսթավելի փողոցի վրա (1950-ականներ)

Նկ.24. Ռուսթավելի-Գորկի փողոցի հետին հատված (տեսքը)

Նկ.25. Ռուսթավելի-Գորկի փողոցի հետին հատված (տեսքը)

Նկ.26. «Գյումրի-չայ» ջրի կոլեկտոր (տեսքը)